



**ԱՇԴՎ Եվրոպական ասոցիացիա  
Էթիկայի կանոնագիրք  
Էթիկական սկզբունքների  
հաղորդագրություն**

Չեղինակներ՝

Կերստին Բերգ Յոհանսսոն, Ճվեդիա  
Մեյլ Բրոուլի, Մեծ Բրիտանիա  
Բրունա Մակարոնե, Իտալիա  
Անտոնիո Օնոֆրի, Իտալիա  
Չեյլ Ռեյթենբորգ, Դանիա

Վավերացնող հանձնաժողով՝ ԱՇԴՎ Եվրոպայի խորհուրդ

Վավերացման ամսաթիվ՝  
Վերանայման ամսաթիվ՝

Յուլի 2010  
Յունիս 13, 2022

<b>ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ</b> .....	2
<b>ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ</b> .....	3
<b>ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՈՒՄ</b> .....	4
<b>ԿՈՆՈՆԱԳՐՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ</b> .....	5
<b>ԷԹԻԿԱԿԱՆ ՍԿՉԲՈՒՆՔՆԵՐ</b> .....	5
1. <b>ՀԱՐԳԱՆՔ</b> .....	5
1.1. <b>Հարգանքի ընդհանուր չափորոշիչներ</b> .....	5
1.2. <b>Գաղտնիության և գաղտնապահություն չափորոշիչներ</b> .....	6
1.3. <b>Տեղեկացված համաձայնության չափորոշիչներ</b> .....	7
1.4. <b>Ինքնորոշման չափորոշիչներ</b> .....	8
2. <b>ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ</b> .....	9
2.1 <b>Մասնագիտական էթիկայի իրազեկման չափորոշիչներ</b> .....	9
2.2. <b>Իրավասությունների և իրավասությունների զարգացման չափորոշիչներ</b> .....	9
2.3 <b>Իրավասությունների սահմանների ճանաչման չափորոշիչներ</b> .....	9
2.4. <b>Մեթոդների սահմանների ճանաչման չափորոշիչներ</b> .....	10
2.5. <b>Արտաքին շրջանակների պատճառով սահմանափակումների չափորոշիչներ</b> .....	10
3. <b>ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ</b> .....	10
3.1 <b>Ընդհանուր պատասխանատվության չափորոշիչներ</b> .....	10
3.2. <b>Հոգածության դադարեցման և շարունակականության չափորոշիչներ</b> .....	10
4. <b>ԱՉՆՎՈՒԹՅՈՒՆ</b> .....	11
4.1 <b>Ազնվության և ճշգրտության չափորոշիչներ</b> .....	11
4.2 <b>Ճահագործումից և շահերի բախումից խուսափելու չափորոշիչներ</b> ...12	
4.3. <b>Անձնական սահմանների պահպանման չափորոշիչներ</b> .....	13
4.4 <b>Էթիկական սխալ վարքագծի դեմ պայքարի չափորոշիչներ</b> .....	13
<b>ՀՂՈՒՄՆԵՐ</b> .....	14
<b>ՀԱՎԵԼՎԱԾ</b> .....	15
<i>Էթիկայի կանոններ, որոնք վերաբերում են հատկապես ԱՇԴՎ հետազոտություններին</i>	
Հետազոտության մասնակիցների պաշտպանության չափորոշիչներ	
Հետազոտության վերաբերյալ տեղեկացված համաձայնություն	
Հետազոտության մասնակիցների դեբրիֆինգի չափորոշիչներ	
Հետազոտության ընթացքում ձայների և պատկերների ձայնագրման համար տեղեկացված համաձայնություն	
Հետազոտության համար տեղեկացված համաձայնություն	
Դեբրիֆինգ	
Հետազոտության արդյունքների հաշվետվություն	
Գրագողություն	
Հետազոտության տվյալների փոխանակում ստուգման համար	

## **Վերջնական տարբերակ առ մարտի 29, 2022 թ. ԱՇԴՎ Եվրոպայի հաղորդագրությունը Էթիկայի կանոնագրքի վերաբերյալ**

### **ՆԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ**

- ԱՇԴՎ Եվրոպայի ճանաչում է իր պարտավորությունը՝ սահմանելու և պահպանելու պրոֆեսիոնալիզմի ամենաբարձր չափանիշները և խրախուսելու բարոյական վարքագիծը, վերաբերմունքը և դատողությունները փոխկապակցված Ասոցիացիաների և ԱՇԴՎ անդամների վերաբերյալ հետևյալ գործողություններով՝
  - գիտակցելով հանրության պաշտպանության անհրաժեշտությունը
  - արտահայտելով հստակ էթիկական սկզբունքներ, արժեքներ և չափանիշներ, երբ աշխատում է այցելուների, գործընկերների, Ազգային ասոցիացիայի անդամների, Ազգային և Եվրոպական խորհուրդների անդամների հետ
  - կրթության և խորհրդատվության միջոցով նման չափանիշները խթանելով
  - մեթոդների մշակմամբ և կիրառմամբ, որոնք կօգնեն ԱՇԴՎ անդամներին վերահսկել իրենց մասնագիտական վարքագիծն ու վերաբերմունքը
  - աջակցելով ԱՇԴՎ անդամներին էթիկական որոշումներ կայացնելու հարցում
  - այս հարցերի շուրջ դիսկուրսի հնարավորությունների ապահովմամբ:
- Սահմանադրության դրույթների համաձայն՝ ԱՇԴՎ Եվրոպայի ճանաչում է Էթիկայի կանոնագրքի և այն պարբերաբար վերանայելու և թարմացնելու անհրաժեշտությունը:
- Վարքագծի կանոնագիրքը (պատրաստման փուլում գտնվող) այժմ ԱՇԴՎ Էթիկայի կանոնագրքի մի մասն է:
- Էթիկայի կանոնները պետք է դիտարկվեն ԱՇԴՎ Եվրոպայի այլ քաղաքականության և ընթացակարգերի հետ համատեղ:
- Այս կանոնագրքի առկայությունը նշանակում է, որ ցանկացած խախտում կարող է զնահատվել ԱՇԴՎ Եվրոպայի և Ազգային ԱՇԴՎ ասոցիացիաների կողմից և առաջ բերել համապատասխան ուղղիչ գործողություններ:
- Կանոնագրքի և մասնագիտական պրակտիկայի միջև առաջացած ցանկացած հակասություն սկզբում պետք է փոխանցվի ԱՇԴՎ ազգային ասոցիացիային, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ԱՇԴՎ Եվրոպա՝ դիտարկման և քննարկման համար:
- Կարևոր է, որ ԱՇԴՎ Եվրոպայի բոլոր ազգային ասոցիացիաները և նրանց առանձին անդամները պարտավորվեն պահպանել այս կանոնագրքի էթիկական սկզբունքները, քանի որ այն հավատարմագրման գործընթացի անբաժանելի մասն է:

- Եթիկական պրակտիկայի վերաբերյալ որոշումներ կայացնելիս ԱՇԴՎ անդամները պետք է հաշվի առնեն տեխնիկական իրավասության կիրառումը իրենց մասնագիտական հմտությունների և դատողությունների կիրարկման հարցում:
- ԱՇԴՎ անդամները լիովին գործակցում են իրենց մասնագիտական մարմնի՝ Ազգային ասոցիացիաների, ԱՇԴՎ Եվրոպայի և իրենց երկրի օրենքների հետ: Դա պետք է արվի օպերատիվ և համապատասխան մարմիններին արձագանքող ձևով: Ակնկալվում է համագործակցային և Եթիկական վարքագիծ գործընկերների, Ազգային ասոցիացիայի անդամների և ԱՇԴՎ Եվրոպայի ասոցիացիայի անդամների նկատմամբ: Սա նշանակում է, որ բոլոր փոխհարաբերությունները պետք է համապատասխանեն արժանապատվության, հարգանքի, արդարության և ազնվության հասկացություններին՝ հարգելով այցելուների, գործընկերների և այլ անձանց իրավունքները, որոնց հետ կան միջանձնային հարաբերություններ:
- Ընդունելով Եթիկայի կանոնները, ինչպես նաև վարքագծի կանոնները՝ ԱՇԴՎ Եվրոպայի ասոցիացիաները պետք է նաև ընդունեն, որ կանոնագիրքը պետք է գործի յուրաքանչյուր երկրի սահմանված իրավական դաշտի հետ փոխկապված և դրա շրջանակներում:

## ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՈՒՄ

ա) Եթիկայի մասին մտածելը պետք է ներթափանցի մասնագիտական գործունեության բոլոր տեսակներ: Եթիկան կարող է սահմանվել որպես գիտություն բարոյականության կամ վարքագծի կանոնների մասին: Նախքան մասնագիտական աշխատանքի անցնելը՝ Եթիկական հետևանքները պետք է դիտարկվեն որպես աշխատանքային համատեքստի մաս՝ իրավական, մասնագիտական և այլ շրջանակների հետ միասին:

բ) Եթիկական մտահոգությունն առաջացնող ճանաչված ոլորտները ներառում են՝

- բազմակի հարաբերություններ – որտեղ ԱՇԴՎ անդամները պարտավոր են հավատարիմ լինել մի քանի տարբեր շահագրգիռ կողմերին
- անձնական հարաբերություններ – երբ ԱՇԴՎ անդամները դրժում կամ խախտում են համաձայնեցված կանոններն ու կանոնակարգերը
- պրակտիկայի անհասկանալի կամ անբավարար չափորոշիչներ – երբ ԱՇԴՎ անդամները տեղյակ չեն կամ անտեսում են ներկայիս համակարգերը, որոնք օգտագործվում են գործընկերների կողմից կամ նմանատիպ աշխատանքում այլոց կողմից
- գաղտնիության խախտում, որտեղ կանոններն ու սահմանափակումները խախտվում են կամ նախապես չեն պարզաբանվում շահագրգիռ կողմերի հետ
- իրավասություն – երբ ավելորդ կամ ապակողմնորոշիչ պահանջներ են ներկայացվում, կամ երբ առկա են անբավարար երաշխիքներ կամ անբավարար մշտադիտարկում աշխատանքի նոր ոլորտների նկատմամբ

- հետազոտական խնդիրներ, ներառյալ տվյալների կեղծումը, համաձայնությունը չստանալը, գրագողությունը կամ ուրիշի աշխատանքը կամ ներդրումը չճանաչելը
- ամողջական խնդիրներ, որոնք ազդում են աշխատանքի կամ վարքի վրա, և
- մասնագիտությունների, կազմակերպությունների կամ թերապիայի գործընթացների հեղինակագրվումը կամ կոնֆլիկտներ առաջացնելը, վիրավորելը և այլն:

գ) Վերոնշյալ մտահոգություններից շատերը ներառում են ոչ էթիկական վարքագիծ, բայց մյուսները ներառում են նաև տեղեկացվածության պակաս, վատ պլանավորում կամ անզգուշություն:

Ռեֆլեկտիվ պրակտիկան, գործընկերների աջակցությունը և մասնագիտական գործունեության թափանցիկությունը կկանխեն խնդիրների առաջացումը կամ վերածումը լուրջ մտահոգությունների:

## ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ա) Սույն կանոնագիրքը հիմնված է չորս էթիկական սկզբունքների վրա, որոնք կազմում են պատասխանատվության հիմնական ոլորտները, որոնց շրջանակներում դիտարկվում են էթիկական խնդիրները:

Դրանք են՝

- Հարգանք
- Իրավասություն
- Պատասխանատվություն
- Ազնվություն

բ) Յուրաքանչյուր էթիկական սկզբունք նկարագրված է արժեքների վերաբերյալ հաղորդագրության մեջ՝ արտացոլելով այն հիմնարար համոզմունքները, որոնք առաջնորդում են էթիկական դատողությունները, որոշումների կայացումը և վարքագիծը:

գ) Նկարագրված յուրաքանչյուր էթիկական սկզբունք հետագայում սահմանվում է մի շարք չափորոշիչներով, որոնք որոշում են էթիկական վարքագիծը, որը ԱՇԴՎ Եվրոպան ակնկալում է իր անդամներից:

## ԷԹԻԿԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

### 1. ՀԱՐԳԱՆՔ

Արժեքների վերաբերյալ հաղորդագրություն

ԱՇԴՎ անդամները գնահատում են բոլոր մարդկանց արժանապատվությունն ու արժեքը՝ զգայուն լինելով այցելուների կամ գործընկերների կողմից ընկալվող հեղինակության կամ ազդեցության դինամիկայի նկատմամբ, և հատկապես հաշվի առնելով մարդկանց իրավունքները՝ ներառյալ գաղտնիության և ինքնորոշման իրավունքը:

#### 1.1. Հարգանքի ընդհանուր չափորոշիչներ

ԱՇԴՎ անդամները պետք է՝

ա) հարգեն անհատական, մշակութային և դերային տարբերությունները, ներառյալ (բայց ոչ բացառելով) տարիքը, հաշմանդամությունը, կրթությունը, էթնիկ պատկանելությունը, սեռը, գենդերային ինքնությունը, լեզուն, ազգային ծագումը, ռասսան, կրոնը, սեռական

կողմնորոշումը, առողջական ընտրությունը, ամուսնական կամ ընտանեկան դրությունը և սոցիալ-տնտեսական կարգավիճակը: Նրանք պետք է խուսափեն ցանկացած գործողությունից, որը կխախտի կամ կխաթարեն այցելուների կամ այլ անձանց մարդկային, իրավական և քաղաքացիական իրավունքները, որոնց վրա նրանք կարող են ազդել:

բ) հարգեն իրենց մասնագիտության և հարակից մասնագիտությունների, այցելուների, համապատասխան երրորդ կողմերի և հանրության գիտելիքները, պատկերացումները, փորձը և փորձառությունը և գործադրեն բոլոր ջանքերը այնքանով, որքանով նրանք կարող են, և, որտեղ որ դա չի հակասի իրենց այցելուների շահերին, լիարժեք տեղեկատվություն տրամադրեն և փոխադարձ հարգանք ցուցաբերեն:

գ) խուսափեն անարդար կամ կանխակալ վերաբերմունքից:

դ) պատրաստ լինեն բացատրել իրենց էթիկական որոշումների կայացման հիմքերը:

ե) աջակցեն և հարգեն ԱՇԴՎ Ազգային և Եվրոպայի ասոցիացիայի քաղաքականությունը, որոշումները և սահմանադրությունը:

զ) չմասնակցեն որևէ գործողության, որը կխեղաթյուրի կամ կհանգեցնի Ազգային ասոցիացիայի, ԱՇԴՎ Եվրոպայի կամ ԱՇԴՎ թերապիայի վարկաբեկման:

## **1.2. Գաղտնիության և գաղտնապահության չափորոշիչներ**

ԱՇԴՎ թերապևտները պետք է՝

ա) Պատշաճ իրականացնեն գրառումները:

բ) Գաղտնի տեղեկատվության բացահայտման համար նախապես ստանան օրենքով գործունակ համարվող այցելուների կամ նրանց լիազորված ներկայացուցիչ համարվող անձանց համաձայնությունը:

գ) Սահմանափակեն գաղտնի տեղեկատվության բացահայտման շրջանակը, որը համապատասխանում է մասնագիտական նպատակներին, նախաձեռնվող հարցման կամ իրադարձության առանձնահատկություններին և (որքանով որ օրենքով պահանջվում է) այցելուի տրամադրած թույլտվության առանձնահատկություններին:

դ) Գրանցեն, մշակեն և պահպանեն գաղտնի տեղեկատվությունը այնպես, ինչպես նախագծված է կանխամտածված բացահայտումից խուսափելու համար և ՀՏԳԿ-ի ազգային ուղեցույցներին համապատասխան:

ե) Առաջին իսկ շփումից համոզվեն, որ այցելուները տեղյակ են գաղտնիության պահպանման սահմանափակումների մասին՝ հատուկ հղում կատարելով՝

ա. պոտենցիալ հակասական կամ վերահսկվող իրավական և էթիկական պարտավորություններին

բ. ծառայությունների մատուցման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով գործընկերների հետ խորհրդակցության/վերահսկողության հավանականությանը, և

գ. հնարավորությանը, որ երրորդ անձինք, ինչպիսիք են թարգմանիչները կամ ընտանիքի անդամները, կարող են աջակցել, որպեսզի ապահովեն, որ տվյալ գործունեությունը չի վտանգվում հաղորդակցության բացակայության պատճառով:

ե) Սահմանափակ են գաղտնիության խախտումները միայն այն բացառիկ հանգամանքներով, որոնց դեպքում կան բավարար ապացույցներ լուրջ մտահոգություն առաջացնելու համար՝

ա. այցելուների անվտանգությունը

բ. այլ անձանց անվտանգությունը, որոնք կարող են վտանգվել այցելուի վարքագծի պատճառով կամ

գ. երեխաների կամ խոցելի մեծահասակների առողջությունը, բարեկեցությունը կամ անվտանգությունը:

զ) Խորհրդակցեն պրոֆեսիոնալ գործընկերոջ, սուպերվայզերի կամ համապատասխան պետական մարմնի հետ, երբ մտածում են գաղտնիության խախտման մասին:

է) Գաղտնիության ցանկացած խախտում և առանց համաձայնության հարկադիր բացահայտման պատճառները փաստաթղթավորեն համաժամանակյա գրությամբ:

ը) Գաղտնի տեղեկատվությունն ուղղակիորեն այցելուներին բացահայտելիս պաշտպանեն այլոց առնչվող տեղեկատվության գաղտնիությունը և տրամադրեն համարժեք օգնություն՝ հասկանալու բացահայտվող տեղեկատվության բնույթն ու բովանդակությունը:

թ) Այցելուների ձայնագրություններ, տեսագրություններ կամ լուսանկարներ կատարեն միայն իրավաբանորեն իրավասու համարվող այցելուների կամ նրանց պատշաճ կերպով լիազորված ներկայացուցիչների հստակ թույլտվությամբ:

ժ) Ձգտեն ապահովել, որ գործընկերները, անձնակազմը, վերապատրաստվողները և սուպերվիզիա իրականացնող անձինք, որոնց հետ աշխատում են ԱՇԴՎ անդամները, հասկանան և հարգեն սույն կանոնագրքի դրույթները, որոնք վերաբերում են գաղտնի տեղեկատվության մշակմանը՝ ԸՏՊԿ-ի ազգային ուղեցույցներին համապատասխան:

### **1.3. Տեղեկացված համաձայնության չափորոշիչներ**

ԱՇԴՎ անդամները պետք է՝

ա) Ապահովեն, որ այցելուներին, հատկապես երեխաներին և խոցելի մեծահասակներին, տրվի համապատասխան հնարավորություն՝ հասկանալու ցանկացած մասնագիտական ծառայության կամ հետազոտական մասնակցության բնույթը, նպատակը և ակնկալվող աղյուսակները, որպեսզի նրանք կարողանան տեղեկացված համաձայնություն տալ այնքանով, որքանով իրենց հնարավորությունները թույլ են տալիս:

բ) Ձգտեն ստանալ բոլոր այցելուների տեղեկացված համաձայնությունը, որոնց առաջարկվում են մասնագիտական ծառայություններ կամ հետազոտական մասնակցություն:

գ) Պահպանեն համապատասխան գրառումներ այն մասին, թե երբ, ինչպես և ումից է ստացվել համաձայնությունը:

դ) Լինեն զգոն, քանի որ այն մարդիկ, ում համար նախատեսվում են մասնագիտական ծառայություններ կամ հետազոտական մասնակցություն, կարող են չունենալ տեղեկացված համաձայնություն տալու օրինական կարողություն:

ե) Երբ այցելուներից տեղեկացված համաձայնությունը հնարավոր չէ

ստանալ, պատշաճ կերպով լիազորված ներկայացուցիչ չի կարող գտնվել, և նշվում է մասնագիտական ծառայությունների մատուցման հրատապ անհրաժեշտություն, հնարավորության դեպքում խորհրդակցեն այն անձի հետ, որը պատշաճ տեղեկացված է այցելուների հնարավոր արձագանքները գնահատելու համար (օրինակ՝ ընտանիքը կամ խնամքի կամ ծառայությունների ներկայիս կամ վերջերս մատուցողը) և աջակցության համար՝ որոշելու, թե ինչը կարող է բխել այցելուների լավագույն շահերից:

զ) Երբ նախատեսվող մասնագիտական ծառայությունների կամ հետազոտության հատուկ բնույթը խոչընդոտում է այցելուների կամ նրանց պատշաճ կերպով լիազորված ներկայացուցիչների տեղեկացված համաձայնության ստացմանը, նախքան շարունակելը, ստանան հատուկ հաստատում էթիկայի համապատասխան ինստիտուցիոնալ մարմիններից: Այնտեղ, որտեղ չկա էթիկայի ինստիտուցիոնալ մարմին, պետք է խորհրդակցեն աշխատակիցների և գործընկերների հետ:

է) Հատուկ զգուշություն դրսևորեն կալանավորված անձանցից տեղեկացված համաձայնություն հայցելու ժամանակ, քանի որ նման դեպքերում հաշվի պետք է առնել այն աստիճանը, որով կալանքի հանգամանքները կարող են ազդել այդպիսի այցելուների ազատ համաձայնություն տալու կարողության վրա:

ը) Խուսափեն այցելուների դիտավորյալ խաբեությունից, բացառությամբ այն դեպքերի, երբ. ա) բացառիկ հանգամանքներում խաբեությունն անհրաժեշտ է հետազոտության ամբողջականությունը կամ մասնագիտական ծառայությունների արդյունավետությունը պահպանելու համար, (բ) այցելուի բարեկեցության պահպանման համար պահանջվող ցանկացած լրացուցիչ երաշխիք հատուկ դիտարկված է, և (գ) խաբեության բնույթը բացահայտվում է այցելուներին հնարավորության դեպքում որքան հնարավոր է շուտ:

#### **1.4. Ինքնորոշման չափորոշիչներ**

ԱՇԴԿ անդամները պետք է՝

ա) Ձգտեն աջակցել այցելուների ինքնորոշմանը, մինևույն ժամանակ զզոն մնալով ինքնորոշման վրա դրված պոտենցիալ սահմանափակումների նկատմամբ՝ անձնական հատկանիշներով կամ արտաքինից պարտադրված հանգամանքներով պայմանավորված:

բ) Առաջին իսկ շփումից համոզվեն, որ այցելուները տեղյակ են մասնագիտական ծառայությունների ստացումից կամ հետազոտական մասնակցությունից ցանկացած ժամանակ հրաժարվելու իրենց իրավունքի մասին:

գ) Կատարեն հետազոտության մասնակցությունից հրաժարվող այցելուների պահանջները առ այն, որ ցանկացած տվյալ, որով նրանք կարող են ճանաչվել անձամբ, ներառյալ ձայնագրությունները, ոչնչացվեն:



## **2. ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ**

Արժեքների վերաբերյալ հաղորդագրություն

ԱՇԴՎ անդամները կարևորում են իրենց մասնագիտական աշխատանքում իրավասության բարձր չափանիշների շարունակական զարգացումն ու պահպանումը: Նրանք պետք է աշխատեն իրենց իրավասության սահմաններում, որը որոշվում է կրթությամբ, ուսուցմամբ և փորձով:

### **2.1. Մասնագիտական էթիկայի իրազեկման չափորոշիչներ**

ԱՇԴՎ անդամները պետք է՝

ա) Մշակեն և պահպանեն մասնագիտական էթիկայի վերաբերյալ համապարփակ իրազեկվածություն, ներառյալ այս կանոնագրքի հետ ծանոթանալը, որը վերաբերվում է ոչ միայն այցելուներին, այլ նաև գործընկերներին և ազգային և եվրոպական կազմակերպություններին (նախահավատարմագրմանը, պրակտիկ մասնագետներին, խորհրդատուներին, ֆասիլիտատորներին, դասընթացավարներին):

բ) Էթիկական նկատառումները ներառեն իրենց մասնագիտական պրակտիկայում՝ որպես շարունակական մասնագիտական զարգացման հիմնական տարր:

### **2.2. Իրավասությունների և իրավասությունների զարգացման չափորոշիչներ**

ԱՇԴՎ անդամները պետք է՝

ա) Պարտավորվեն և ներգրավվեն շարունակական մասնագիտական զարգացման մեջ:

բ) Տեղեկացված լինեն գիտական, էթիկական և իրավական նորամուծություններից, որոնք Էական նշանակություն ունեն իրենց մասնագիտական գործունեության համար՝ միաժամանակ հետևելով ընթացիկ զարգացումներին ավելի լայն՝ սոցիալական, քաղաքական և կազմակերպչական համատեքստերում, որտեղ նրանք աշխատում են:

### **2.3 Իրավասությունների սահմանների ճանաչման չափորոշիչներ**

ԱՇԴՎ անդամները պետք է՝

ա) ճանաչեն իրենց իրավասության սահմանները և աշխատեն այդ սահմաններում: Նրանք պետք է միայն այնպիսի ծառայություններ և օգտագործեն թերապիայի այնպիսի տեխնիկաներ, որոնց համար նրանք որակավորված են վերապատրաստման և փորձի հիման վրա:

բ) Պարբերաբար դիմեն խորհրդատվության և սուպերվիզիայի, հատկապես, երբ հանգամանքները սկսում են վիճարկել նրանց գիտական կամ մասնագիտական փորձը:

գ) Ձգտեն ապահովել, որ նրանց անմիջական հսկողության տակ աշխատողները նույնպես համապատասխանեն սույն չափորոշիչի պահանջներից յուրաքանչյուրին, և որ նրանցից չպահանջվի աշխատել իրենց իրավասության սահմաններից դուրս:

## **2.4. Մեթոդների սահմանների ճանաչման չափորոշիչներ**

ԱՇԴՎ անդամները պետք է՝

ա) Տեղյակ լինեն և ընդունեն իրենց մեթոդների սահմանները, ինչպես նաև եզրակացությունների սահմանները, որոնք կարող են ստացվել նման մեթոդներից տարբեր հանգամանքներում և տարբեր նպատակներով:

բ) Կատարեն իրենց պարտականությունները զգոն պատրաստվածության և պատրաստակամության հիման վրա, որպեսզի նրանց պրակտիկան լինի ամենաբարձր չափանիշներին համաատասխան, իսկ հաղորդակցությունը լինի ճշգրիտ, ընթացիկ և տեղին:

## **2.5. Արտաքին շրջանակների պատճառով սահմանափակումների չափորոշիչներ**

ԱՇԴՎ անդամը ուշադիր է, թե ինչպես սոցիալական և աշխատանքի հետ կապված պայմանները կարող են նպաստել կամ խոչընդոտել իրենց իրավասության կամ մեթոդի համարժեք կիրառմանը:

## **3. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

Արժեքների վերաբերյալ հաղորդագրություն

ԱՇԴՎ անդամները գնահատում են իրենց պարտականությունները այցելուների և վերապատրաստվողների, հասարակության, գործընկերների և Ասոցիացիայի այլ անդամների, ինչպես նաև իրենց հիմնական մասնագիտության նկատմամբ, ներառյալ վնաս պատճառելուց խուսափելը և հասարակության մեջ իրենց ներդրումների վատ օգտագործման կամ չարաշահման կանխումը:

### **3.1 Պատասխանատվության ընդհանուր չափորոշիչներ**

ԱՇԴՎ անդամները պետք է՝

ա) Տեղյակ լինեն իրենց մասնագիտական և գիտական պարտականությունների մասին իրենց այցելուների, վերապատրաստվողների, համայնքի և հասարակության հանդեպ, որտեղ նրանք աշխատում և ապրում են:

բ) Խուսափեն վնաս պատճառելուց և պատասխանատու լինեն իրենց արարքների համար և հնարավորինս վստահ լինեն, որ իրենց ծառայությունները վատ նպատակի չեն ծառայում:

գ) Տեղյակ լինեն այլոց գիտական և մասնագիտական գործունեությունից, ում հետ նրանք աշխատում են՝ հատուկ ուշադրություն դարձնելով աշխատողների, օգնականների, սուպերվայզերների և ուսանողների էթիկական վարքագծին:

դ) Պարտավոր են տեղյակ լինել իրենց համար հնարավոր ռիսկերից:

### **3.2. Հոգաժության դադարեցման և շարունակականության չափորոշիչներ**

ԱՇԴՎ անդամները պետք է՝

ա) Առաջին իսկ շփման դեպքում կամ առաջին իսկ հնարավորության դեպքում պարզաբանեն, թե ինչ պայմաններով կարող են դադարեցվել

մասնագիտական ծառայությունները:

բ) Ստանան խորհրդատվություն այն դեպքերում, որտեղ, կարծես, անորոշություն կա մասնագիտական ծառայությունները շարունակելու վերաբերյալ:

գ) Դադարեցնեն մասնագիտական ծառայությունները, երբ այցելուները կարծես թե օգուտներ չեն ստանում և դժվար թե ստանան:

դ) Այցելուներին ուղղորդեն օգնության այլընտրանքային աղբյուրների, եթե դա հնարավոր է և տեղին է՝ նպաստելով հոգածության փոխանցմանը և շարունակականությանը այլ մասնագետների հետ ողջամիտ համագործակցության միջոցով:

#### **4. ԱՁԿՈՒԹՅՈՒՆ**

Արժեքների վերաբերյալ հաղորդագրություն

ԱՇԴՎ անդամները գնահատում են ազնվությունը, ճշգրտությունը, պարզությունը, ճշմարտացիությունը և արդարությունը գիտության, ուսուցման և պրակտիկայի բնագավառում գործընկերների, այցելուների և բոլոր մարդկանց հետ իրենց փոխհարաբերություններում, և իրենց գիտական և մասնագիտական գործունեության բոլոր առումներով:

##### **4.1 Ազնվության և ճշգրտության չափորոշիչներ**

ԱՇԴՎ անդամները պետք է՝

ա) Լինեն ազնիվ և ճշգրիտ՝ ներկայացնելով իրենց մասնագիտական պատկանելությունները և որակավորումները՝ ներառյալ այնպիսի կետեր, ինչպիսիք են գիտելիքները, հմտությունը, դասընթացները, կրթությունը և փորձը:

բ) Որպես ԱՇԴՎ-ում մասնագիտական պատրաստվածության, որակավորումների և հավատարմագրման վկայություն պահանջեն միայն ԱՇԴՎ Եվրոպայի կողմից ճանաչվածները:

գ) Ճանաչեն ԱՇԴՎ-ում անցկացվող դասընթացները, որակավորումները և հավատարմագրումը միայն այն դեպքում, եթե դրանք հավատարմագրված են ԱՇԴՎ Եվրոպական ասոցիացիայի և իրենց ԱՇԴՎ Ազգային ասոցիացիայի կողմից:

դ) Ձեռնպահ մնան անարդար խտրականությունից իրենց աշխատանքային գործունեության մեջ՝ հիմնված տարիքի, սեռի, գենդերային ինքնության, ռասայի, էթնոսի, մշակույթի, ազգային ծագման, կրոնի, սեռական կողմնորոշման, առողջական ընտրության, հաշմանդամության, սոցիալ-տնտեսական կարգավիճակի կամ որևէ հիմքի վրա, որը արգելված է օրենքով:

ե) Իրենց գործունեության ընթացքում չգողանան, չխաբեն կամ չզբաղվեն խարդախությամբ, խաբեբայությամբ կամ փաստերի դիտավորյալ խեղաթյուրմամբ:

զ) Լինեն ազնիվ և ճշգրիտ՝ ներկայացնելով սուպերվիզիայի, վերապատրաստման, աշխատանքային և այլ պայմանագրային հարաբերությունների ֆինանսական և այլ պայմաններն ու պարտավորությունները:

է) Լինեն ազնիվ և ճշգրիտ իրենց մասնագիտական ծառայությունների գովազդում:

ը) Ապահովեն, որ այցելուներն առաջին իսկ շփումից տեղյակ լինեն մասնագիտական ծառայությունների մատուցման ծախսերի և վճարման եղանակների մասին:

թ) Ներկայացնեն միայն պատշաճ հեղինակային իրավունք կամ հղում իրենց համապատասխան հետազոտության, հրապարակված գրությունների կամ այլ գիտական և մասնագիտական ներդրումների համար և տրամադրեն պատշաճ տեղեկություն համատեղ աշխատանքում այլոց ներդրումների մասին:

ժ) Որպես դասընթացավարներ՝ ԱՃԴՎ անդամները երաշխավորում են, որ դասընթացի պլանի վերաբերյալ հայտարարությունները ճշգրիտ են և ապակողմնորոշող չեն, և ճշգրիտ ներկայացնում են ԱՃԴՎ անդամների կրթությունը, դասընթացները և փորձը, ովքեր ներկայացնում են նախագծեր և բարձրաձայնում վարձատրության որևէ չափ:

#### **4.2 Շահագործումից և շահերի բախումից խուսափելու չափորոշիչներ**

ԱՃԴՎ անդամները պետք է՝

ա) Տեղյակ լինեն այն խնդիրների մասին, որոնք կարող են առաջանալ երկակի կամ բազմակի հարաբերություններից, օրինակ՝ սուպերվիզիա իրականացնելը այն վերապատրաստվողների համար, որոնց հետ նրանք կապված են կամ դասավանդելը ուսանողներին, ում հետ նրանք արդեն ունեն ընտանեկան հարաբերություններ, կամ հոգեբանական թերապիա ընկերոջը տրամադրելը:

բ) Խուսափեն հարաբերություններ ձևավորելուց, որոնք կարող են խաթարել մասնագիտական օբյեկտիվությունը կամ այլ կերպ հանգեցնել այցելուի շահերի շահագործման կամ բախման:

գ) Այցելուների և այլ համապատասխան կողմերի համար պարզաբանեն ներկայումս ստանձնած մասնագիտական դերերը և շահերի բախումները, որոնք կարող են առաջանալ:

դ) Չշահագործեն և չվնասեն այն անձանց, որոնց նկատմամբ նրանք ունեն սուպերվիզորի, գնահատողի կամ այլ անձի լիազորություններ, ինչպիսիք են այցելուները, ուսանողները, սուպերվիզիա անցնող անձինք, հետազոտության մասնակիցները, գործընկերները և աշխատակիցները, կազմակերպություններից այցելուները և այլոք, ում հետ նրանք աշխատում են:

ե) Չանեն կեղծ, խաբուսիկ կամ խարդախ հայտարարություններ իրենց պատրաստվածության, փորձի կամ իրավասության վերաբերյալ, ի թիվս՝ իրենց գիտական աստիճանների, իրենց հավատարմագրերի, իրենց ինստիտուցիոնալ կամ ասոցիացիոն պատկանելության, իրենց ծառայությունների, իրենց ծառայությունների գիտական կամ կլինիկական հիմքերի կամ արդյունքների կամ հաջողվածության աստիճանի, իրենց ծառայության արժեքների կամ իրենց հրապարակումների կամ հետազոտության արդյունքների մասին:

զ) Չմասնակցեն, չօժանդակեն, չօգնեն կամ այլ կերպ չներգրավվեն ֆիզիկական կամ հոգեկան խոշտանգումների մեջ, որոնք սահմանվում են որպես որևէ գործողություն, որը մարդուն դիտավորյալ ծանր ցավ կամ տառապանք է պատճառում կամ որևէ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վարքագիծ է ներկայացնում:

Ե) Ընդունեն, որ շահերի հնարավոր բախումները և իշխանության անհավասարությունը դեռևս կարող են մնալ մասնագիտական հարաբերությունների պաշտոնապես դադարեցումից հետո, այնպես որ մասնագիտական պարտականությունները դեռ կարող են նրանց վերաբերվել:

Երբ շահերի բախում է առաջանում այցելուների և ԱՇԴՎ անդամների գործատու հաստատությունների միջև, ԱՇԴՎ անդամները պարզաբանում են իրենց հավատարմության և պարտականությունների բնույթն ու ուղղությունը և բոլոր կողմերին տեղեկացնում են իրենց պարտավորությունների մասին:

#### **4.3 Անձնական սահմանների պահպանման չափորոշիչներ**

ԱՇԴՎ անդամները պետք է՝

ա) Չերժ մնան որևէ ձևով սեռական կամ ռոմանտիկ հարաբերություններ ունենալուց այն անձանց հետ, ում նրանք մասնագիտական ծառայություններ են մատուցում կամ ում նրանք պարտավոր են շարունակել հոգածությամբ վերաբերվել: Սա կարող է վերաբերվել նախկին այցելուի, ուսանողի կամ վերապատրաստվողի կամ աշխատակազմի կրտսեր անդամի:

բ) Չերժ մնան ոտնձգություններից կամ նվաստացնելուց այն անձանց, ում հետ նրանք շփվում են իրենց մասնագիտական աշխատանքում կամ ԱՇԴՎ ասոցիացիայի մեջ՝ հիմնվելով այդ անձանց տարիքի, սեռի, գենդերային ինքնության, ռասայի, էթնիկ պատկանելության, մշակույթի, ազգային ծագման, կրոնի, սեռականության կողմնորոշման, առողջական ընտրության, հաշմանդամության, լեզվի կամ սոցիալ-տնտեսական կարգավիճակի վրա:

գ) Ընդունեն որպես ոտնձգություն ցանկացած անցանկալի բանավոր կամ ֆիզիկական վարք, որը ծաղրում, արհամարհում կամ վիրավորում է մարդուն, և որը կարող է բաղկացած լինել մեկ լուրջ արարքից կամ բազմաթիվ համառ կամ հաստատամիտ արարքներից, ներառյալ սեռական առաջարկությունները, որոնք խանգարում են մեկ այլ անձի աշխատանքին կամ ստեղծում են վախեցնող, թշնամական կամ վիրավորական աշխատանքային միջավայր, նաև Ազգային և Եվրոպական ԱՇԴՎ ասոցիացիաներում:

#### **4.4 Էթիկական սխալ վարքագծի դեմ պայքարի չափորոշիչներ**

ԱՇԴՎ անդամները պետք է՝

ա) Դիմագրավեն այն գործընկերներին, ովքեր, ըստ երևույթին, ներքաշվել են էթիկական սխալ վարքագծի մեջ, և (կամ) դիտարկեն նման սխալ վարքագծի մասին մեղադրանքները ներկայացնելը նրանց, ովքեր պատասխանատու են դրանց հետաքննության համար, ներառյալ ԱՇԴՎ ազգային և ԱՇԴՎ Եվրոպական ասոցիացիաները, հատկապես, երբ հայտնվում են հասարակության անդամներ, ովքեր կարող էին կամ կարող են ազդվել խնդրո առարկա համարվող վարքագծից:

բ) Գործընկերոջ կողմից անօրինական վարքագծի վերաբերյալ մեղադրանքներ ներկայացնեն առանց չարամտության և գաղտնիության խախտման, բացառությամբ այն դեպքերի, որոնք անհրաժեշտ են պատշաճ քննչական գործընթացների համար:

գ) Էթիկայի կանոնները խախտելու վերաբերյալ ցանկացած մտահոգություն կարող է հետաքննվել՝ օգտագործելով ԱՇԴԿ Եվրոպայի համապատասխան քաղաքականությունն ու ընթացակարգերը:

## **ՅՆՈՒՄՆԵՐ**

Ամերիկյան հոգեբանական ասոցիացիայի Էթիկայի հանձնաժողով,  
կանոններ և ընթացակարգեր, հունիս 2018 թ.

ԱՇԴԿ Եվրոպայի Էթիկայի օրենսգիրք, 2010 թ.

Յոգեբանական ասոցիացիաների Եվրոպական ֆեդերացիա, Անդամ ասոցիացիաների Էթիկական կանոնների ուղեցույց, վերանայված Գլխավոր ասամբլեայի կողմից, Գրանադա, հուլիս 2005 թ.

## ՀԱՎԵԼՎԱԾ

*Եթիկայի կանոններ, որոնք վերաբերում են հատկապես ԱՇԴԿ հետազոտություններին*

### Հետազոտության մասնակիցների պաշտպանության չափորոշիչներ

Երբ պահանջվում է ինստիտուցիոնալ հաստատում, ԱՇԴԿ անդամները ճշգրիտ տեղեկատվություն են տրամադրում իրենց հետազոտական առաջարկությունների մասին և ստանում են հաստատում նախքան հետազոտությունն իրականացնելը: Նրանք հետազոտությունն իրականացնում են հաստատված հետազոտական արձանագրության համաձայն:

### Հետազոտության վերաբերյալ տեղեկացված համաձայնություն

(ա) Տեղեկացված համաձայնությունն ստանալիս, ինչպես պահանջվում է (տեղեկացված համաձայնություն) ԱՇԴԿ անդամները մասնակիցներին տեղեկացնում են (1) հետազոտության նպատակի, ակնկալվող տևողության և ընթացակարգերի մասին, (2) նրանց իրավունքի մասին՝ հրաժարվելու մասնակցելուց ընդհանրապես և այն ժամանակ, երբ հետազոտությունը արդեն սկսվել է. (3) հրաժարվելու կամ դուրս գալու կանխատեսելի հետևանքների մասին. (4) ողջամտորեն կանխատեսելի գործոնների մասին, որոնք կարող են ակնկալվել, որ կազդեն նրանց մասնակցության պատրաստակամության վրա, ինչպիսիք են հնարավոր ռիսկերը, անհանգստությունը կամ անբարենպաստ ազդեցությունները. (5) հետազոտության ցանկացած հեռանկարային օգուտների մասին. (6) գաղտնիության սահմանների մասին. (7) հետազոտությանը մասնակցելու դրդապատճառների մասին. և (8) այն մասին, թե ում դիմել հետազոտության և հետազոտության մասնակիցների իրավունքների վերաբերյալ հարցերի համար: Դրանք հնարավորություն են տալիս ապագա մասնակիցներին հարցեր տալ և ստանալ պատասխաններ:

(բ) ԱՇԴԿ անդամները, որոնք իրականացնում են ինտերվիզիոն հետազոտություն, որը ներառում է փորձարարական թերապիա, մասնակիցների համար պարզաբանում են հետազոտության սկզբում (1) թերապիայի փորձարարական բնույթը. (2) ծառայությունների շրջանակը, որոնք անհրաժեշտության դեպքում հասանելի կլինեն կամ չեն լինի վերահսկիչ խմբին(երին). 3) միջոցները, որոնցով նշանակվելու է թերապիա և հսկողություն խմբերի նկատմամբ. (4) թերապիայի մատչելի այլընտրանքները, եթե անհատը չի ցանկանում մասնակցել թերապևտիկ հետազոտությանը կամ ցանկանում է հրաժարվել ուսումնասիրությունը սկսելուց հետո. և (5) մասնակցության դրամական ծախսերի փոխհատուցումը, ներառյալ, անհրաժեշտության դեպքում, փոխհատուցումը, որը կպահանջվի մասնակցից կամ երրորդ կողմ հանդիսացող վճարողից:

### **ԱՇԴՎ անդամները պետք է՝**

(1) Բոլոր հետազոտությունները դիտարկեն հետազոտության մասնակիցների տեսանկյունից՝ հոգեբանական բարեկեցության, ֆիզիկական առողջության, անձնական արժեքների կամ արժանապատվության համար հնարավոր ռիսկերը վերացնելու նպատակով:

(2) Պատասխանատվություն կրեն իրենց հետազոտական թեմաների և մեթոդների ընտրության համար, որոնք օգտագործվում են հետաքննության, վերլուծության և հաշվետվությունների մեջ:

(3) Դիտարկեն, պատշաճ մտահոգությամբ, օրինակ՝ տարիքի, հաշմանդամության, կրթության, էթնիկական պատկանելության և համայնքի պատկանելության, սեռի, լեզվի, ազգային ծագման, կրոնի, ամուսնական կամ ընտանեկան կարգավիճակի կամ սեռական կողմնորոշման հնարավոր հետևանքները՝ դիմելով խորհրդատվության համար անհրաժեշտության դեպքում նրանց, ովքեր գիտեն նման ազդեցությունների մասին:

(4) Չերժ մասն հետազոտության մասնակիցների համար ֆինանսական փոխհատուցումներից կամ այլ դրդապատճառներից, որպեսզի վտանգի չենթարկվեն իրենց սովորական ապրելակերպի ժամանակ իրենց առջև առկա վնասից ավելին:

(5) Հատուկ զգուշություն ցուցաբերեն, երբ հետազոտության մասնակիցները գտնվում են կոմերցիոն միջավայրում, և թերապևտի վարձատրությունը կարող է ազդել թերապիայի վրա:

(6) Ստանան անկախ խորհրդատուների կշռադատված և ոչ սուբյեկտիվ հավանությունը, երբ կեզրակացնեն, որ հետազոտությունից կարող են բխել վնասներ, անսովոր անհարմարություն կամ այլ բացասական հետևանքներ, և ստանալ լրացուցիչ տեղեկացված համաձայնություն հետազոտության մասնակիցներից հատուկ խնդիրների դեպքում:

(7) Տեղեկացնեն հետազոտության մասնակիցներին առաջին իսկ շփումից, որ ցանկացած պահի հրաժարվելու իրենց իրավունքը չի ազդում որևէ ֆինանսական փոխհատուցման կամ մասնակցության այլ դրդապատճառների ստացման կամ առաջարկի վրա:

(8) Տեղեկացնեն հետազոտության մասնակիցներին առաջին իսկ շփումից, որ նրանք կարող են հրաժարվել պատասխանել իրենց տրվող հարցերին, միաժամանակ տեղեկացնելով, որ դա կարող է հանգեցնել նրանց մասնակցության դադարեցմանը, հատկապես, երբ անվտանգության հետ կապված խնդիրներ կան:

(9) Տեղեկացնեն հետազոտության մասնակիցներին, երբ ապացույցներ են ձեռք բերվել հոգեբանական կամ ֆիզիկական խնդրի մասին, որի մասին նրանք ակնհայտորեն տեղյակ չեն, եթե թվում է, որ դա չանելը կարող է վտանգել նրանց ներկա կամ ապագա բարեկեցությունը:

(10) Հատուկ զգուշություն կիրառեն հետազոտության մասնակիցների հոգեբանական կամ այլ հարցերի վերաբերյալ խորհրդատվության հարցումներին պատասխանելիս և առաջարկեն ուղղորդել օգնության, եթե, թվում է, թե հարցումը ներառում է բավական լուրջ խնդիրներ, որոնք անհրաժեշտ են դարձնում մասնագիտական ծառայությունները:



## Հետազոտության մասնակիցների դեբրիֆինգի ստանդարտ ԱՃԴՎ անդամները պետք է՝

(1) անցկացնեն դեբրիֆինգ հետազոտության մասնակիցների համար իրենց մասնակցության ավարտին՝ նրանց տեղեկացնելու հետազոտության արդյունքների և բնույթի մասին, բացահայտելու ցանկացած անկանխատեսելի վնաս, անհարմարություն կամ սխալ պատկերացումներ և անհրաժեշտության դեպքում օգնություն կազմակերպելու նպատակով:

(2) Հատուկ զգուշություն կիրառեն հետազոտության մասնակիցների հետ արդյունքները քննարկելիս, քանի որ գնահատողական հայտարարությունները կարող են չնախատեսված կշիռ ունենալ:

## Հետազոտության ընթացքում ձայների և պատկերների ձայնագրման համար տեղեկացված համաձայնություն

ԱՃԴՎ անդամները ստանում են հետազոտության մասնակիցների տեղեկացված համաձայնությունը՝ նախքան նրանց ձայները կամ պատկերները ձայնագրելը տվյալների հավաքագրման համար, բացառությամբ այն դեպքերի, երբ (1) հետազոտությունը բաղկացած է բացառապես բնագիտական դիտարկումներից հասարակական վայրերում, և չի ակնկալվում, որ ձայնագրությունը կօգտագործվի այնպես, որ կարող է առաջացնել անձնական նույնականացում կամ վնաս, կամ (2) հետազոտության նախագիծը ներառում է խաբեություն, և ձայնագրությունն օգտագործելու համաձայնությունը ձեռք է բերվում վերլուծության ժամանակ:

## Հետազոտության համար տեղեկացված համաձայնություն

ԱՃԴՎ անդամները կարող են հետազոտություն անցկացնել առանց տեղեկացված համաձայնության (1) միայն այն դեպքում, երբ հետազոտությունը ողջամտորեն չի ենթադրվում, որ անհանգստություն կամ վնաս է պատճառում և ներառում է (ա) կրթական հաստատություններում իրականացվող սովորական կրթական պրակտիկաների, ուսումնական ծրագրերի կամ դասարանների կառավարման մեթոդների ուսումնասիրություն. (բ) միայն անանուն հարցաթերթիկներ, բնագիտական դիտարկումներ կամ արխիվային հետազոտություններ, որոնց պատասխանների բացահայտումը մասնակիցներին չի ենթարկի քրեական կամ քաղաքացիական պատասխանատվության կամ կվնասի նրանց ֆինանսական վիճակը, աշխատունակությունը կամ հեղինակությունը, և որ գաղտնիությունը պաշտպանված է. կամ (գ) աշխատանքի կամ կազմակերպության արդյունավետության հետ կապված գործոնների ուսումնասիրություն, որն իրականացվում է կազմակերպական միջավայրերում, որոնց դեպքում մասնակիցների աշխատունակության համար վտանգ չկա, և գաղտնիությունը պաշտպանված է, կամ (2) եթե այլ բան թույլատրվում է օրենքով կամ ինստիտուցիոնալ կանոնակարգերով:

## Դերրիֆիկաց

(ա) ԱՇԴՎ անդամները մասնակիցներին արագ հնարավորություն են տալիս համապատասխան տեղեկատվություն ստանալու հետազոտության բնույթի, արդյունքների և եզրակացությունների մասին:  
(բ) Երբ ԱՇԴՎ անդամներն տեղեկանում են, որ հետազոտական ընթացակարգերը վնասել են մասնակցին, նրանք ողջամիտ քայլեր են ձեռնարկում վնասը նվազագույնի հասցնելու համար:

## Ջետազոտության արդյունքների հաշվետվություն

ա) ԱՇԴՎ անդամները տվյալներ չեն կեղծում: (բ) Եթե անդամները հայտնաբերում են ծանրակշիռ սխալներ իրենց հրապարակած տվյալների մեջ, նրանք ողջամիտ քայլեր են ձեռնարկում ուղղելու, հետ կանչելու, սխալի կամ հրապարակման այլ համապատասխան միջոցներով նման սխալները շտկելու համար:

## Գրագրողություն

ԱՇԴՎ անդամները չեն ներկայացնում ուրիշի աշխատանքի կամ տվյալների հատվածները որպես իրենց սեփականը:

## Ջետազոտության տվյալների փոխանակում ստուգման համար

ա) Ջետազոտության արդյունքների հրապարակումից հետո ԱՇԴՎ

անդամները չեն թաքցնում այն տվյալները, որոնց վրա հիմնված են իրենց եզրակացությունները այլ հրավասու մասնագետներից, ովքեր փորձում են ստուգել Էական պնդումները վերավերլուծության միջոցով և ովքեր մտադիր են օգտագործել այդ տվյալները միայն այդ նպատակով, պայմանով, որ մասնակիցների գաղտնիությունը կարող է պաշտպանվել, և բացառությամբ այն դեպքերի, երբ գույքային տվյալների հետ կապված օրինական իրավունքները խոչընդոտում են նրանց հրապարակմանը: Սա չի խանգարում ԱՇԴՎ անդամներին պահանջել, որ այդպիսի անձինք կամ խմբերը պատասխանատվություն կրեն նման տեղեկատվության տրամադրման հետ կապված ծախսերի համար:

բ) Ջետազոտողները, ովքեր տվյալներ են պահանջում այլոցից՝ վերավերլուծության միջոցով Էական պնդումները ստուգելու համար, կարող են օգտագործել համօգտագործվող տվյալները միայն հայտարարված նպատակի համար: